ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 85

«18» 10 2022 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 42 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ մասով, 23-րդ հոդվածի 3-րդ մասով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Իրավաբանական գիտությունների թեկնածու Հովհաննես Քոչարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ՝ 3 տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» 26.04.2021թ. N 42 հրամանի 1-ին կետում լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ՝

Հովհաննես Քոչարյան -	Իրավաբանական գիտությունների թեկնածու

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակման հաջորդող օրվանից:

4.Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5.Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ